614

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՏԿ-ՆԵՐՈՒՄ

СИГНАЛЬНЫЙ ЭКЗЕМПЛЯР

614
Կ-21

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ ՍԱՆԼՈՒՍ ԲԱԺԻՆ

ԵՐԵՎԱՆ 1939

17.05.2013
3439
3820
39

Գլավլիտի լիազոր Ե 2252
Պատ. № 477, Տիրաժ 4000

ՀայԿ. ԽՍՀ ԺԿԽ-ի հրատարակչ. «Խ. Հ.»-ի տպարան, Երևան

614 ար.
4-21

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ԽՍՀՄ ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏԱՆՏԵՍՈՒԶ
ՅՈԼԿԻՆ
4 նոյեմբերի 1939 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՄՏԿ-ՆԵՐՈՒՄ

1. Պետական սանիտարական տեսչության աշխատողները, բժշկական տեղամասերի բժիշկներն ու բուժակները կոլտնտեսություններում, ՄՏԿ-ներում և խորհտնտեսություններում սանիտարա-պրոֆիլակտիկ աշխատանք տանելիս հենվում են հասարակական ակտիվի վրա, հանձին հասարակական սանիտարական լիազորների:

2. Գյուղական հասարակական սանիտարական լիազորը՝

ա) ստուգում է իրեն հանձնված օբյեկտի (օբյեկտների) սանիտարական դրությունը.

բ) հայտնում է բուժաշխատողներին ինչ-

պես կոլտնտեսականների վարչությունների և ՄՏ-կայանների ու սովխոզների ադմինիստրացիաների, այնպես էլ կոլտնտեսականների և գյուղատնտեսական բանվորների կողմից սանիտարական կանոնների ու վարուչումների խախտումների բոլոր դեպքերի մասին։ Հասարակական սանիտարական լիազորի պարտականությունն է նման խախտումների բոլոր դեպքերում ողնել պետական սանիտարական տեսչության մարմիններին այդ խախտումները վերացնելու համար միջոցներ ձեռք առնելու գործում.

դ) հայտնում է բուժաշխատողներին ինֆեկցիայի տեսակետից կասկածելի հիվանդությունների բոլոր դեպքերի մասին.

ե) կազմակերպում է աղբարկության ինքնագործունեությունը գյուղի սանիտարական բարեկարգության և աշխատանքի ու կենցաղի պայմանները առողջացնելու գործում.

յ) ողնում է բուժաշխատողներին կազմակերպելու առաջին ողնությունը դաշտային աշխատանքներում, ինչպես նաև գյուղատնտեսական տրավմատիզմը կանխելու միջոցառումների անցկացմանը։

Դաստիարակություն.— Աշխատողներին առաջին մինչբժշկական ողնությունն անմիջապես ցույց տալու համար, գյուղատնտեսական բրիգադներում կոլտնտեսականներից և գյուղատնտեսական բանվորներից առանձնացվում են «աուկայանականներ» վորոնք վարժված են առաջին ողնության ձևերին և ոժտված վիրակապական նյութերով ու դեղերով։

զ) Ողնում է բուժաշխատողներին սանիտարա-լուսավորական աշխատանքը կազմակերպելու և անցկացնելու գործում։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3. Գյուղական հասարակական սանիտարական լիազորներն ընտրվում են.

ա) կոլտնտեսություններում- ընդհանուր ժողովում, ամենից ավելի ակտիվ և պատրաստված կոլտնտեսականներից, յուրաքանչյուր գյուղատնտեսական բրիգադին մեկ լիազորի հաշվով, բացի դրանից, մեկական լիազոր յուրաքանչյուր խոշոր հանրայնացված օբյեկտի համար (ՄՏՖ, հա-

վաքական, դպրոց, մսուր, հասարակական ճաշարան և այլն)։

բ) խորհտնտեսություններում և ՄՏԿ-ներում —բանվորների և ծառայողների ընդհանուր ժողովում, 40—50 բանվորներին մեկ լիազորի հշավով, բացի դրանից, մեկական լիազոր յուրաքանչյուր արտադրական և կենցաղային նշանակություն ունեցող խոշոր օբյեկտի համար (արհեստանոցներ, ճաշարաններ, մանկական հիմնարկներ և այլն)։

Ծանոթություն.— Վորևե օբյեկտում վարչա-տնտեսական պաշտոն վարող անձինք չեն կարող նույն օբյեկտում սանիտարական լիազոր լինել։

4. Սանիտարական լիազորներն ընտրվում են մեկ տարի ժամանակով։ Յեթե սանիտարական լիազորը չի կարողանում կատարել իրեն վրա դրված պարտականությունները, կատարվում է նոր սանիտարական լիազորի մինչժամկետային ընտրություն։

5. Սանիտարական լիազորներն ընտրվելուց հետո անցնում են բժշկական տեղամասերին, հիվանդանոցներին կամ շրջանային պետական սանիտարական տեսչության (շրջանային սանիտարական կայանին) կից կազմակերպվող հատուկ դասընթացները։ Դասընթացները հաջող անցկացնելուց հետո հասարակական սանիտարական լիազորները հաշվառման են յենթարկվում շրջպետսանտեսչությունում։ Տեղամասային բժշկական տեղամասը պետք է ապահովի սանիտարական լիազորների աշխատանքի հրահանգումը և ամենորյա ղեկավարությունը։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԼԻԱԶՈՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ

6. Հասարակական սանիտարական լիազորն իր ամբողջ աշխատանքը տանում է տեղամասային բժշկի ղեկավարությամբ։

7. Իր աշխատանքը տանելու ժամանակ լիազորը կոլտնտեսությունում, ՄՏԿ-ում և խորհտնտեսությունում պետք է միասեղ աշխատի հետևյալ կազմակերպությունների հետ՝

ա) առողջապահական սեկցիայի, իսկ վորտեղ նա չկա, գյուղական կամ ավանային խորհրդի կուլտ-կենցաղային սեկցիայի հետ։

բ) մոտակա բժշկական կայանի բժշկի կամ շրջանային պետական սանիտարական տեսչի հետ.

գ) կոլտնտեսության կուլտ-կենցաղային հանձնաժողովի հետ, խորհնտեսության քաղաքժնի և բանկոմի հետ.

դ) ԼԿՅԵՄ-ի տեղական կազմակերպության, Կարմիր Խաչի և Կարմիր Կիսալուսնի ընկերության, Պաշտ- Ավիաքիմի, ակումբի վարչության և այլն.

յե) պատի թերթի խմբագրական կոլեգիայի հետ, և ըստ հնարավորության, տեղական թերթի խմբագրության հետ (բազմատիրաժներ, շրջանային թերթեր).

զ) բրիգադների, դպրոցների սանպոստերի հետ:

8. Ընտրված հասարակական սանիտարական լիազորներն իրենց իրավունքների և լիազորությունների մասին վկայական են ստանում շրջանային պետական սանիտարական տեսչից:

9. Իր աշխատանքում հասարակական սանիտարական լիազորը հաշվետու յե կոլտնտեսության, խորհնտեսության, ՄՏԿ-ի ընդհանուր ժողովի, ինչպես նաև պետատեսչության մարմինների կամ բժշկական տեղամասի բժշկի առաջ:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղում հասարակական սանիտարական լիազորների խնդիրների ու պարտականությունների մեջ են մտնում՝

10. Պարբերաբար հետազոտել կոլտնտեսության, խորհնտեսության, ՄՏԿ-ի և առանձին օբյեկտների (ճաշարանների, խանութների, կոլտնտեսության վարչության, գյուղխորհրդի շենքերի, հանրակացարանների, մսուրների, դպրոցների) սանիտարական դրությունը:

11. Ստուգել սանիտարա- համաճարակային միջոցառումների և առողջապահական աշխատանքներ կատարելու վերաբերյալ շրջգործկոմների ու գյուղխորհուրդների պարտադիր վորոշումների, ինչպես նաև պետական սանիտարական տեսչության պահանջների կատարումը:

12. Ողնել պետական սանիտարական տեսչին և տեղամասային բժշկին վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի գործում (հայտնաբերել հիվանդներին, հայտնել հիվանդացածների մասին, ողնել հիվանդներին տեղափոխելու ժամանակ, միջոցներ

ձեռք առնել ժամանակավորապես մեկուսացնելու վարակիչ հիվանդներին մինչև նրանց բուժհիմնարկ ուղարկելը, աջակցել բուժաշխատողներին նախապահպանական պատվաստումներ, դեզինֆեկցիա կատարելու գործում, կազմակերպել կոլտնտեսային քաղաքներ կառուցելու ինքնագործունյությունը և այլն)։

13։ Ողնել կազմակերպելու պայքարը տրավմատիզմի դեմ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ, ստուգելով պաշտպանական և նախապահպանական հարմարանքները մեքենաներով աշխատելու ժամանակ։

14։ Ողնել բուժաշխատողներին կազմակերպելու վնասվածներին, անակնկալ կերպով հիվանդացածներին առաջին ողնություն ցույց տալու աշխատանքը, աջակցել նրանց հիվանդանոց տեղափոխելու համար փոխադրական միջոցներ ստանալուն։

15։ Ցերեվան բերել նախաձեռնություն առողջապահական կարգի հարցերը կոլտնտեսության վարչության և խորհտնտեսության ու ՄՏԿ-ի ադմինիստրացիայի առաջ դնելու և առաջ տանելու գործում։ Զգտել առողջապահական կարգի կետեր մտցնել

Խորհուրդներում ընտրվածների նակազների մեջ և այլն։

16։ Ամենամոտ բժշկական տեղամասի (բուժարանի) բժշկի հետ միասին մասնակցել գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ իր մասի բժշկական սպասարկման պլանը մշակելուն։

17։ Հայտնել պետական սանիտարական տեսչին կամ տեղամասային բժշկին, միաժամանակ տեղեկացնելով համապատասխան ձեռնարկության վարչությանը վատորակ սննդամթերքներ կամ պատրաստի ճաշեր վաճառելու կամ բաց թողնելու բոլոր դեպքերի մասին։

18։ Վերահսկել մթերային խանութների, ճաշարանների և հասարակական սննդի մյուս հիմնարկների վարչությունների կողմից աշխատողներին բժշկական քննության համար կանոնավոր կերպով մոտակա բուժարան ուղարկելուն։

19։ Տանել ավանը առողջացնելու և բարեկարգելու ամենօրյա աշխատանք (նորոգել ու մաքրել ջրհորները, պահպանել հողի մաքրությունը, մաքուր պահել հասարակական և անհատական զուգարանները, աղբի արկղները և կեղտաջրի հորերը, հե-

3439

տեսել բաղնիքների սանիտարական դրությունը և կանոնավոր աշխատելուն, մոծակների բազմանալու օջախները վերացնելուն, ավանը կանաչապատելուն, բնակարանների մաքրությանը, նրանց կանոնավոր ողողելուն և այլն)։

20. Ոգնել բուժաշխատողներին սանիտարա-լուսավորական աշխատանքը կազմակերպելու և տանելու գործում (դասախոսություններ, զրույցներ, զեկուցումներ, հարց ու պատասխանի յերեկոներ և այլն), մասնակցել խրճիթ-ընթերցարանի աշխատանքին, խորհրդատեսային, կոլտնտեսային և շրջանային թերթերի աշխատանքին և աջակցել սանիտարա-լուսավորական գրականության տարածմանը։

21. Հասարակական սանիտարական լիաղորը պարտավոր է բարձրացնել իր սանիտարական գիտելիքները՝ սանիտարական գրականություն կարդալու, սանիտարական դասախոսությունների և պարապմունքների հաճախելու միջոցով և աշխատանքի ու կենցաղի պայմաններում սանիտարական բոլոր կանոնները որինակելի կերպով կատարելու որինակ տալ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0270391